ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» հոկտեմբերի 2017 թ. N 139

ք.Ստեփանակերտ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԻ ՏԱԿ ՑԱՆՎԱԾ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹՈՒՆԱՆՅՈՒԹԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանրապետության շրջաններում աշնանացան մշակաբույսերի ցանքատարածքներում մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ կազմակերպելու նպատակով՝ հիմք ընդունելով շրջաններից ներկայացված հայտերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու նպատակով <<Բույսերի պաշտպանության ծառայություն>> ՊՈԱԿ պահեստում առկա 1280.0 լիտր Բրոդիֆակում թունանյութից 800.0 լ բաշխել նշված չափերով՝

Մարտունու շրջան	400.0
Քաշաթաղի շրջան	400.0
Ը ն դ ա մ ե ն ը	**800.0**

2. <<Բույսերի պաշտպանության ծառայություն>> ՊՈԱԿ տնօրեն Վ.Խաչատրյանին՝

1) թունանյութը բաց թողնել վերը նշված չափաքանակով,

2) հսկողություն սահմանել իրականացվելիք պայքարի աշխատանքների նկատմամբ,

3) ընդունել հաշվետվություններ՝ կատարված աշխատանքների մասին և ներկայացնել նախարարություն:

3.Արցախի հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնին՝ ապահովել սույն հրամանի դրույթների կատարումը:

Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ